ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀ-ՖՆ-ԲԸՀԱՇՁԲ-14/2 ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի արդյունքում 2014թ-ի դեկտեմբերի 16-ին կնքված ՀՀ-ՖՆ-ԲԸՀԱՇՁԲ-14/2 ծածկագրով գնման պայմանագրում 2015թ-ի փետրվարի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել աշխատանքների կատարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 20.02.2015թ. կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ՀՀ ֆինանսների նախարարության ք.Երևան, Անդրանիկի 37/1 հասցեում գտնվող վարչական շենքի հիմնանորոգման /1-ին փուլ/ աշխատանքների և ՀՀ ֆինանսների նախարարության ք.Երևան, Անդրանիկի 37/1 հասցեում գտնվող վարչական շենքի հիմնանորոգման /2-րդ փուլ/ աշխատանքների կատարման ժամկետները, այն համապատասխանաբար սահմանելով մինչև 2015 թվականի մարտի 25-ը և մինչև 2015 թվականի ապրիլի 3-ը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 011 800 626:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նախարարություն**

Համաձայնագիր-2
16.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸՀԱՇՁԲ-14/2 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «20» փետրվարի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Կ.Թամազյանի մի կողմից, և «Ֆիլիշին» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս ընկերության տնօրեն Ս.Հակոբյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 16.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸՀԱՇՁԲ-14/2 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.4-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1,1. Կողմերը որոշեցին երկարաձգել Պայմանագրով նախատեսված ՀՀ ֆինանսների նախարարության ք.Երևան, Անդրանիկի 37/1 հասցեում գտնվող վարչական շենքի հիմնանորոգման /1-ին փուլ/ աշխատանքների և ՀՀ ֆինանսների նախարարության ք.Երևան, Անդրանիկի 37/1 հասցեում գտնվող վարչական շենքի հիմնանորոգման /2-րդ փուլ/ աշխատանքների կատարման ժամկետները, այն համապատասխանաբար սահմանելով մինչև 2015 թվականի մարտի 25-ը և մինչև 2015 թվականի ապրիլի 3-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Ֆիլիշին» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Ադամյան-1	ՀՀ Տավուշի մարզ, գ.Հաղարծին, 1-ին փողոց 10-րդ փակուղի.15
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900013202016, 900013574018	Հ/Հ 2472300335960010
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 07905342
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար	«Ֆիլիշին» ՍՊԸ-ի տնօրեն՝
Կ.Թամազյան	**Ս.Հակոբյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ